

Աղբակ, ևն. ուրիշ էր Կարնի, Վանի, Բաղէշի, Տիգրանակերտ ևն. քաղաքների վիճակը: Աւելին բաց թողնենք, երեք դրութիւն էր ստեղծուեր: Քաղաքներէ կ'անցնէին Կ. Պոլիս, իսկ Հայաստանի վերև յիշած գաւառական մասերը կը մնային իրենց նախկին վիճակին՝ և Կ. Պոլսի մէջ կը գորանար ուժեղ գաղթականութիւն, որ իր մէջ 200,000ի հասնելէ յետոյ կը ծաւալուէր իր մօտիկ շրջակաները, որով իրերու դրութիւնը փոխուելով Պատրիարքարանի համար, հայկական գործերը կը հասկցուէին այդ մեծ գաղթականութեան գործերը. Հայաստանի քաղաքները իրենց գաղթականութեան յարաբերութեամբ շատ քիչ բաժին ունէին անոնց մէջ, իսկ Հայաստանի մնացեալ գաւառական մասերը բնաւ չունէին: Հայաստանը բամբակէ թելով հազիւ կապուեցաւ Պատրիարքարանին:

Միւս կողմէ Օսմանեան Կայսրերն ու քաղաքագէտները Բիւրդ ցեղերին տուին Շըխութիւն, մի տեսակ մահմետական Պատրիարքութիւն Բիւրդերի համար:

Քրիստոնէական Հայ Պատրիարքութիւն ու Մահմետական Բիւրդ Շըխութիւն, ահա քաղաքագիտակ երկու հզօր գործոն, երկու տոկուն ու հզօր տարրերը մեղմիկ ախրկու համար (*):

(*) Էրնսթ Լոման, «Միթթալլունկէն տուստէմ Օրքինդ» (տեղեկութիւններ Արևելքէն) ամսաթերթին մէջ կը գրէ: (1904-Հոկտ.տետր 1)

«Թիւրքերը երբ մտան Առաջակողմեան—Ասիան, Բիւրդերուն գտան այդ սահմաններուն վրայ հոծ բաղմունքեամբ: Անոնց բնականօք այս երկիրը Կորդուիք կ'անուանուէր, Բիւրդերու պատերազմի մէջ ունեցած քաջասրտութիւնը, Թէ՛ կը վախցնէր Թիւրքերուն և Թէ՛ որոնել կու տար իրենց բարեկամութիւնը:

Տասնևվեցերորդ դարուն Թիւրքերը կրցան Բիւրդերը նուաճել, և արդէն նոյն միջոցին՝ իրենց առաջին սխալմունքը գործեցին՝ երբ սկսան Բիւրդ ցեղերը գաղթեցնել Էրզրումի և Երևանի մէջտեղ եղած Հայական երկիրներուն մէջ, որոնց բնակչութիւնը արևմտահեղ հալածանքներու պատճառաւ շատ անօտարացած էր:

Թիւրքերու դիտաւորութիւնն էր այս զինեալ Բիւրդ ցեղերով Շիւ—Պարսիկներուն դէմ պատնէշ մը կանգնեցնել և միանգամայն Հայ — Քրիստոնեաները սանձահարել, ասով սկսաւ դժբաղդ խառնուրդ մը Հայ և Բիւրդ բնակչութեան մը: